

4479

Сумма /

Сумма выданных
книжек

232.9

h - 82

1910



232.9

Խ-82

12 NOV 2009

Թի 12, Հրատարակութիւն «Հայրենիք», -ի

Վ. ԽՈՐԷՆԻ

**ՔՐԻՍՏՈՍԻ
ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ**



Handwritten signature

16171

ԳՕՍԹԸՆ
«ՀԱՅՐԵՆԻՔ»-Ի ՏԳՍՐԱՆ
1910

06 FEB 2014

4479

Handwritten signature in Armenian script

Handwritten signature - DEC 28 - 1913

Handwritten signature



ձերդեցնում եմ ձեզ, եղբայրներ, հաւատարիմ մնացէք երկրին և մի հաւատար նրանց, որոնք ձեզ հետ գերեզկրային յոյսերից կը խօսեն. Յունաւորիչներ են նըրանք, զիտեն նրանք այդ թէ՛ոջ»:
ՆԻՅՁԷ

Բոլոր հասարակական ձևերի մէջ էլ, նախապատմալ՝ շրջանից մ'նչև մեր օրերը, միշտ էլ մարդկուի լանը ընդհանուր առումով երկու շասակարգերի է բաժանուել: Սկզբից և եթ նկատուել է մարդկանց մէջ հետեւեալ զօրեղ բաժանումը — իշխող և իշխեալ, տէր և ստրուկ, հարուստ և աղքատ, վայելող ու աշխատող: Հգօրների մի փոքրիկ խմբակ շարունակ սուել, կերակրուել է թշուառների ահագին բազմութեան արիւն-քրտինքով, լւացել, փարթամութեան վայելքների մէջ, լողացել հեշտանքի ու զեղխութեան ապարանքներում: Իսկ անոնց նպատակն է եղեր այդ ամենի համար տքնող հոգւով ու մարմնով ստրուկներին Սիզիֆեան(*) աշխատանքներով տանջել ու տանջել ստորերկրեայ որջերում, որովհետև «մինչև այժմ գոյութիւն ունեցող իրաւական հաստատութիւնները յանգել են ուժի վրայ և ուստի միշտ իրենց նպատակ են ունեցել — հոգալ մի քանի ուժեղների շահերի մասին» հաշիւ ժողովրդական լայն

(*) Սիզիֆ, առասպելական էակ մը, որ դատապարտուած էր Արամազդէն յաւիտենապէս սպառնալի կտորներ դէպի լեռը բարձրացնելու:

2173 - 2002

մասսաների», ասում է Ա. Մենդեր:

Եթէ մի կողմից ազատագրութեան մղումը, ազատութեան բնագոյրը և աշխատելու սէլը մարդկային հոգու մշտական բնածին յատկանիշերից է, ապա իշխելատեւը և պարագիտիզմը նրա կենդանական բնոյթի ոչ նւագ հաստատուն, դժւարանց ու գոյաբանական գծերից են: Ուժն ու իշխանութիւնը ծնում են հրէշաւոր բռնութիւնների բոլոր տեսակները և առաջ բերում երկինք աղաղակող անարդարութիւններ ու սոսկալի ապօրինութիւններ. — իշխանութիւն ու բռնութիւն, ստրկութիւն ու տանջանք, վայելելու, ուրիշի հաշուով ապրելու տենչանք, հետևաբար ծառայեցնելու, կեղեքելու ձգտում և դրանց հակառակ իր աշխատանքի տէր և ազատ լինելու, իրաւունքներ ձեռք բերելու մրշտական, թէև երբեմն խուլ, պայքար: Ահա՛ մարդկային պատմութեան միջուկը, նրա շատ հակիրճ ամփոփումը: Երկու ձգտումներ — ստրկացնելու և ազատելու -- ահա՛ այդ երկու ծայրերի մէջ է դարձել ամենատեսակ պայքարների ու պատերազմների պատմութիւնները: Եւ իշխող ու արտօնեալ դասակարգերն են, որ մինչ այժմ գլխաւորապէս պատեցրել են իրենց դասակարգային շահերի թելադրած ուղղութեամբ պատմութեան հսկայ անիւը իրրև աւելի գիտակ ու հղօր դասեր:

Ազատ, հաւասար ու միատեսակ վիճակով -- յերջ աշխարհ եկող արարածները շուտով տարբերում, զանազանում են իրարից: Մի փոքրիկ մասը դառնում է ամեն տեսակի արտօնութիւնների, իրաւունքների և իշխանութեան, հարբստութեան տէր առանց աշխատելու, միշտ ազատ

ու անհոգ վայելող, իսկ խոշոր մեծամասնութիւնը դրա դիմաց իրենից ներկայացնում է լոկ իրաւազուրկ ու ստրուկ, արհամարհուծ ու լքւած, տանջւած, խեղճ ու կրակ պարիաների, մարմնացեալ տառապանքի մի հսկայական մոխրագոյն զանգւած: Իշխանաւորների ու իրաւատէրերի, պարագիտների և յափշտակիչների այդ վոհմակը միշտ իր ձեռքին ունենալով ողջ իշխանութիւնը, իրեն է միայն վերապահում կեանքի բոլոր քաղցրութիւնները, քաղաքակրթութեան բոլոր բարիքներից միայն ինքն է լիուլի օգտուում, ամենազագիւր ու անբարոյական նրբութիւնների հասցնում իր նիւթական, հոգեկան ու մտաւոր կարիքների բաւարարելը: Իսկ իրեն ստորագրեալ անդուլ, անդադար տանջող մասսաներին բաժին պահում միայն բազմապիսի ու բազմաթիւ կարիքներ ու զրկանքներ, նեղութիւն ու հալածանք, ցաւ ու տանջանք, արիւն-քրտինք, աղի-արցունք, ախ ու վախ:

Կեանքի մէջ եղած այս սոսկալի անհարթութիւնները, անկանոնութիւններն ու հակասութիւնները չէին կարող սկզբից և եթ աննրկատ մնալ: Եւ մարդկութեան մէջ գտնուում են բարեսիրտ ու մարդասէր անհատներ, թըլւառների սրտացաւ բարեկամներ, բոնք և իրրև զօրեղ բնաւորութեան տէր և տաղանդաւոր գլուխներ՝ հանդէս են գալիս պատմութեան զանազան շրջաններում՝ կուելու կեանքի անարդարութիւնների դէմ: Նրանք իրենց անծի մէջ մարմնացնում են ժամանակակիցների ամբողջ բողոքն ու հասարակական կեանքի ցաւազար կողմերը բաժնելու, նրա խոշոր հոսանք-

ները ուղղելու, մարդկութիւնը փրկելու, տեն-
ջանքներն ու երազները:

Բայց որովհետեւ մարդկային մտքի հորիզոնը
դեռ շատ նեղ էր, որովհետեւ գիտութիւնները
դեռ ևս խանձարուրի մէջ էին, որովհետեւ դեռ
վերլուծող, քննադատող մտքի ու բնական գի-
տութիւնների ցուցադրած բոլոր անհերքելի
ճշմարտութիւններն ու նորագոյն գիւտերը դեռ
անյայտ էին և մարդկութեան մտքի վրայ իշ-
խողը դեռ ևս Աստծու Մեծ Շնորհքն էր: Ուս-
տի և պատմութեան առաջին շրջանների վար-
դապետները՝ կրօնի վարդապետներ էին, նրանք
իրենց դերը գլխաւորապէս մարդկանց հոգեկան,
բարոյական կեանքի առաջնորդութեան ու հո-
գացողութեան մէջ էին գտնում. իրենց կոչման
կրօնական գոյն էին տալիս և հետեւաբար՝ իրենց
ծագումն էլ երկնային ընդունում:

Թէև այս կամ այն չափով անխուսափելիօ-
րէն մարդկութեան այդ ուսուցիչներին զբա-
ղեցրին նաև տնտեսական, սոցիալական խնդիր-
ներ, բայց բարի ցանկութիւններից և պղատօնա-
կան ամուլ ցաւակցութիւններից այն կողմը
չանցան նրանք և կեանքի շատ հրատապ հար-
ցերի նկատմամբ բաւականացան լոկ կատեգօ-
րիկ, լակոնական պատւիրանքներ տալով, կանոն-
ների և ընդհանուր ցուցմունքների հաստատու-
մով:

Բուդդա, Կոնֆուցիոս, Մովսէս, Քրիստոս,
Մահմէդ և այլն եղել են առաւելապէս միայն
կրօնա-բարոյական բարենորոգիչներ:

Մի կողմ թողնելով միւսներին կանգ առ-
նենք Քրիստոսի վարդապետութեան վրայ և
համառօտակի բնորոշենք նրա ուսմունքի սօցի-

ալական արժէքը, էութիւնն ու որակը, որը
կեղծ սօցիալական փայլով մինչև սյժմ էլ կղեր
դասը աշխատում է կուրացնել մասսաներին իր
կթան կովից և արդիւնաբեր «հօտից» զրկելու
երկիւղից աւելի ու աւելի մեծ ճիգերով, որ-
պէսզի ճնշւածներն ու քաղցածները չդաւանին
բոլոր արտոնեալների, նաև հոգեւորականութեան
համար գերեզման փորող ճշմարիտ, գիտական
սօցիալիզմը:

Քրիստոսի վարդապետութեան մէջ սօցիա-
լական տեսակէտները որոշ սիստէմի չէ վերած
ւած: Նրա ուսմունքից չէ կարելի որոշակի դա-
ղափար կազմել՝ թէ նա ինչպիսի հասարակա-
կան կազմ, ինչպիսի ընկերավարական յարաբե-
րութիւններ է կամենում: Եւ սրա պատճառը
նրա վարդապետութեան զրքերն են. նախ՝ նրա
համար որ այդ զրքերը -- նրա Աւետարանները
որոշ ուղղութեամբ նրա ուսմունքի շարահիւ-
սութիւն չեն կազմում, այլ հակիրճ, յաճախ ա-
նորոշ և թեր ու դէմ պատւիրանների, ասաց-
ւածքների և երկդիմի առակների ու խօսքերի
ժողովածու են: Երկրորդ՝ նրա համար, որ ա-
ւետարանները կասկածելի աղբիւրների և ուշ
ժամանակի արդիւնք են: Եւ երրորդ՝ որ դրանք
յիշատակարանների բնաւորութիւն են կրում --
լսածի և շատ շատ յիշողութեան վրայ հիմնը-
ւած*): Դ. Մ. Շտրաուսը ասում է այդ մասին.
«Դա (Քրիստոսի կրօնական սիստէմը) բառ առ
բառ կեղծ է և հակասութիւններով լի, կրօնա-

*) Աւետարանները «սարքւած են առաջին
երեք դարերի բազմաթիւ իրար հակասող ու
կեղծ ձեռագիրների կտորներից»: Է. Հիֆել,

կան բոլոր առողջ գաղափարներին ներհակ և մարդկութեան բարոյական կատարելութեան համար խանգարիչ»:

Ի՞նչ էր սովորեցնում — պատւիրում Գրիստոս: Ամենից առաջ — սէր դէպի մերձաւորը, մի ամենատարրական, թէև էական պատւիրան, որ ընդհանուր է բոլոր կարգի վարդապետներին. այնպէս որ դրա վրա կանգ առնել չարժէ: Դա նրա սեփականութիւնը չէ: Նրա պարզապետութեան, նրա ուրազածած համայնքի ընկերվարական յարաբերութիւնների և անհատական փոխադարձ ազատութեան քննաշափը կազմում է հետևեալ բնորոշ ասացածքը, որ նոյնպէս նրանը չէ**), — «որպէս կամենում ես մարդիկ քեզ հետ վարեն՝ այդպէս էլ դու նրանց հետ վարելի»: Բայց այսպիսի մի իտէալական համայնք իրականացնելու համար ի՞նչ դրական միջոցների, որպիսի՞ ակտիւ կուրի է դիմում նա: Եւ ո՞չ մի:

Գրիստոս իրեն աղքատների ու թշուառների դատը պաշտպանելու կոչւած է համարում և ուստի կանչում է. «Եկէ՛ք իմ մօտ բոլոր վաստակեալներ ու բեռնաւորներ և ես կը հանգստացնեմ(?) ձեզ»!!: «Կը հանգստացնեմ» — ի՞նչ և ի՞նչպէս, ի՞նչ միջոցներով — ինքն էլ չգիտէ. նա այդ քաղցածների դատին դասակարգային բնոյթ չի տալիս, ուստի չի ղեկավարում, չի առաջնորդում որոշ ճանապարհով, այլ լոկ բա-

**) Ճիշտ նման ձևով այդ միտքը արտայայտել են նրանից առաջ Պիտտակը՝ 620ին (Ք. ա.), Կոնֆուցիոսը՝ 500ին, Արիստոտէլը՝ 7-րդ դարու կէսին և ուրիշներ: Հէֆէլ

ւականանում է ցնորոկան պատւիրաններով, հռչակաւոր խոստումներով և «վայ»երով ու «երանի»ներով: Եւ նրա այդ վեհ իտէալները մնում են նրա բարի սրտում իբրև լոկ սիրուն իղձեր ու փափաքներ և շատ շատ միայն սակաւթիւ համախոհներից փրբրիկ, բարեսիրտ ու աստուածավախ աղօթաւորների խղճուկ համայնք կազմում, իսկ ապա՝ յետագայում էլ (ինչպէս, իչ յետոյ կը տեսնենք) նրա սյս սաղմային սօցիալական ուսմունքը միանգամայն անտես է առնում նրա ներայացուցիչների — հոգևորականութեան ու եկեղեցու կողմից:

Եւ այսպէս՝ Գրիստոսի ընկերվարական ուսմունքը լոկ բարի ցանկութիւններ և հոգեշահ ու վարդաշող երազներ էին, արդարութեան և հաւասարութեան լոկ բոպէի ու դէպքի պատւիրաններ. — «Կիսի՛ր, բաժանի՛ր, ների՛ր» և այլ բաղձալի հրամայականներով, որոնք երբէ՛ք ընդհանուր կանոններ և հասարակական յարաբերութիւնները որոշող, հին կանոններն ու կարգերը յեղաշրջող և նոր կեանքի նորմաներ դառնալու ուժ և զօրութիւն չունեցան:

Գրիստոս պատւիրում է շապիկը տալ ընկերին զնալ, ծախել ունեցածը և բաժանել չունեւորներին. իսկ յետո՞յ. — «Ե՛կ իմ ետևից», կանչում էր նա: Ո՞ւր: Դէպի ճգնաւորների վայրերը — լեռներն ու ծովերը: Փոխանակ կուրի դատում կանգնելու և անմիջապէս ապօրինութիւնների և անարդարութիւնների դէմ կուելու, փոխանակ ցաւոտ իրականութեան դառն հակասութիւնները հարթելու, փոխանակ անընդհատ ու անհաշտօրէն պայքարիլ ու կուրիլ սովորեցնելու՝ նա սիրոյ գեղեցիկ խօսքը շրթունքին՝

լեռներն է բարձանում և այնտեղից հաչտու թիւն
ու համբերութիւն է քարոզում կամ շատ շատ
սպառնում, սարսափեցնում ու լացացնում:

Ահ, սպառնալիք, զայրոյթ, անէծք ու նզովք
և միշտ անարձագանք մնալու դատապարտւած,
անպտուղ խորհուրդներ, կոչեր, վայեր ու երա-
նիններ...: Ահա՛ նրա ողջ սնանկ միջոցները դա-
րերի անծայր անարդարութիւնները կարճելու
համար, նրա ամբողջ ուժն ու զօրութիւնը,
նրա ցնորական և անհիմն ամոքադեղերու ամբողջ
չարքը: Դրանից այն կողմը նա չէր անցնում:
Դրանց հետ նաև մարդասիրական ու բարի ձգտ-
ումներն էին կազմում նրա քարոզած սօցիա-
լական կեանքի ճանապարհներն ու իրականաց-
նելու միջոցները:

Քրիստոսի ուսմունքի մէջ մենք չենք գտ-
նում նաև պատասխաններ այնպիսի կարևոր
խնդիրների նկատմամբ, որպիսիքն են քաղաքա-
կան, ազգայնական քաղաքացիական խնդիրնե-
րը, որոնք պէտք էր, որ Քրիստոսի ընդառաջ
ցցւած լինեն մի ժամանակ, երբ ընկել էր հրէ-
ական թագաւորութիւնը և իր քաղաքական ան-
կախութիւնը կորցրած ժողովուրդը տնքում էր
հռոմէական պետութեան իշխանութեան տակ:
Նրա միակ խուսափողական պատասխանը թէ՛
«տւէք Աստծունը Աստուծոյ և «կայսրինը կայ-
սեր», ոչինչ չեն ասում յօգուտ նրա:

Եւ երկրային կեանքի մասին միայն այսքա-
նը: «Այս կեանքի» համար նա աւելին էլ ասել
ու անել չէր կարող, որովհետև նա «այն կեան-
քի» քարոզիչ էր. նրա համար էականն ու կա-
րևոր «այն կեանքն» էր. իսկ «այս կեանքը» նրան
միայն այնքան էր զբաղեցնում ու հոգացողու-

թեան առարկայ դարցնում, որքան դա «հան-
դերձեալի» համար նախապատրաստութեան տե-
սակէտից կարևոր էր համարում:

Այստեղից էլ բղխում են քրիստոնէութեան
ու սօցիալիզմի հիմնական տարբերութիւններն
ու հակասութիւնները: Դրանք էապէս հակադիր
ուսմունքներ են: Նմանութիւնը առերևոյթ է
ու մակերևոյթային*) Եւ այդ արտաքին հարա-
դատութեան քօղի տակ թագցնել են ձգնում
ներքին զօրեղ հակասութիւններն ու ներհա-
կութիւնները, որոնցով այդ երկու ուսմունք-
ները փոխադարձ ժխտման ու բացասման յարա-
բերութեան մէջ են գտնուում:

Ամենամեծ ու հիմնական տարբերութիւն-
ներից մէկը հէնց այն է, որ մինչ մէկը գլխա-
ւորապէս իրաւունքներից է խօսում, միւսը՝
ընդհակառակը՝ միայն պարտականութիւններից:
Իսկ դրանք ոչ միայն անբաժանելի են, այլ և
իրար լրացնող, իրար ենթադրող ու պայմանա-
ւորող: Առանց մէկի՝ միւսը լոկ դատարկու-
թիւն, դեռ աւելին — փլաստիկար սեփականու-
թիւն է:

Ապա քրիստոնէութիւնը իր չարին չհակա-
ռակելու պատւէրով՝ իբրև անպայման խաղա-
ղութեան, բացարձակ ու անխտիր սիրոյ և նե-
րողամտութեան երդւեալ դրօշակակիր՝ շատ է
հեռանում, մինչ անձանաչելիութեան աստի-

*) Այդ կարծեցեալ նոյնութեան հետևանք
է այն ծիծաղաշարժ յայտարարութիւնը թէ՛
«Քրիստոս» — կամ — «առաջին քրիստոնէաները»
— «առաջին սօցիալ դեմօկրատներն են»:

ճան խորթանում սօցիալիզմից, որ դաւակարգային ներհակութիւն ու թշնամութիւն է քարոզում: Քրիստոս պահանջում է սէր ընդհանրապէս դէպի մեզ պէսները, «մեզ» նման Աստուծու պատկեր ունեցողները, առանց ունէ նկատումների ու բաժանումների: Իսկ սօցիալիզմը քարոզում է սէր և համերաշխութիւն մեզ նման վիճակ ու շահեր ունեցողների հետ միայն: Քրիստոնէութիւնը անխտիր ու անպայման սէրն ու խղաղութիւնը հէնց այժմեանից ճանապարհ ու նպատակ է ընդունում, իսկ սօցիալիզմը միայն հեռաւոր նպատակ, որին հասնելու համար իբրև միջոց ժամանակաւորապէս կիրառնում է թշնամանքը, ներհակութիւն ու կռիւր ընդդէմ իրաւապէս և տնտեսապէս մեղնից տարբերներին:

Քրիստոս իր մեղկ ու սարկական պատերազաններով քնացնում է ժողովրդին: Սօցիալիզմը, ընդհակառակը՝ ըմբոստացումի և անհաշտ մարտի կոչերով արթնացնում է, կռւի ասպարէզ հանում և նրա հայեացքը երկընքից երկիր դարձնում: Երկնքից իջեցնում, վար է բերում երջանիկ օրւայ հաւատքն ու յոյսերը — հաւասարութեան թագաւորութիւնը — այս աշխարհում իրականացնել աշխատում:

Երկուսն էլ դժգոհ են տիրող կարգերից, աշխարհի օրէնքներից, բայց այդ դժգոհութիւնն ու բողոքը տարբեր բնոյթ է ստանում իւրաքանչիւրի մօտ: Եւ նրանց երկուսի նմանութիւնը այդ անբաւականութեան մէջ պէտք է տեսնել, իսկ տարբերութիւնը այդ արտայայտելու և դրանից իրենց նպատակների համար օգտուելու ձևի ու եղանակի մէջ:



Քրիստոնէութիւնը մի ուժգին, տարբերակն աղաղակ է բոլոր անարդարութիւնների դէմ: սակայն մի յուսահատ և ամուլ աղաղակ ու միայն այսքանը:

Ընդհակառակը, սօցիալիզմի բողոքն ու աղաղակը գիտակցական է, ցասումի շեշտերով ու հատուցման շանթերով:

Այս կրաւորական կամ ներգործական լինելն էլ որոշում են դրանց էութիւնը. մէկը իր թուլամորթ անգործնէութեամբ և փրկութեան ճանապարհների անգիտակցականութեան շնորհիւ, առաջացած այս աշխարհում բարեխա կեանքի կատարեալ անյուսութեան մէջ — իւրաքանչիւր իր վիճակից դժգոհի, յուսահատի սիրածի միջոցին է դիմում, այն է՝ միսիթարւել ցնորքներով, ապրել իր ցանկալի վիճակի երազով, և այգպիսով երջանիկ ու ազատ օրւայ յոյսը փոխադրել այն աշխարհ — անդրշիրիմեան երանաւէտ ու անցաւ կեանքի սին գաղափարով ապրում:

Որպէսզի չը նոսրանան իրեն շրջապատողների — թշուառների և քաղցածների շարքերը — ամուլ պատերազաններից անբաւարար ու դժգոհ մնացածները որպէսզի չը թողնեն նրան — Մեծ Երազողը յուսախաբութիւնից ու լքումից նրանց հեռու պահելու համար առաջադրում է իր համայնաբուժական դարմանը, իր ցնորականութեան մէջ եղակի — Հանդերձեալ կեանքը: Շլացնում և թունաւորում է նրանց միաքը այդ պատիր կեանքի քաղցրանուշ օրօրներով, անդրաստեղեան հաւասարութեամբ և արդարութեամբ, որ — չգիտեմ էլ ինչո՞ւ — առաջինները պիտի լինեն յետիններ, իսկ յետինները — առաջիններ: Ահա՛ չարիքների շարիքի արմատը քրիս-

տոնէութեան մէջ, դարաւոր մոլորութիւնների մայր գաղափարը: Ահա՛ քրիստոնէական «փշրկութեան» (կարգա՛ և կրկնի՛ր — ստրկութեան), քրիստոնէութեան ընկերական սնանկութեան «անձեռակերտ» արձանը:

Ահա՛ Քրիստոսի վարդապետութեան ամենափնասակար ու կորստաբեր կողմը: Ինքը մի դրական բուժիչ միջոց չտալով հանդերձ՝ դարեր շարունակ նման քնացնող պատրանքներով ու ցնորքներով է սնուցել ու մթազնել տանջւող մասսաների բռնաբարւած գիտակցութիւնը: Այդպիսով նա զրկել է երկրաւոր կեանքի բարւոքման հոգատարութիւնից ու իրական միջոցներ և մի ուղիղ ճանապարհ փնտռելու ոչ միայն հնարաւորութիւնից, այլ և մտքից: Չառանցական այդ կեանքի պատրանքով նա օրօրել և հարկադրել է կիսաքաղց ու թշուառ ժողովուրդին բերան բաց միայն և միայն դէպի երկինք նայելու, ձեռները ծալած նստեցուց և անվերջ (մինչև Ք.ի աշխարհ գալը?) սպասելու և երկրնքից օգնութիւն հայցելու:

Ասում են Քրիստոնէութիւնը խեղճերի, անտունների կրօն էր: Ճիշտ է, բայց միայն բացասական իմաստով: Նա խօսեց թշուառութիւնից, իր սրտին շատ մօտ առաւ ցաւն ու տանջանքը, բայց նա ոչնչով չաշխատեց ոչնչացնել, վերացնել այդ տանջանքը, այլ ընդհակառակը, նա միացաւ, ձուլւեց դրա հետ և զրանով սրբազործեց տանջանքը: Նա դարձաւ թշուառութեան ու խեղճութեան մի վարդապետութիւն, նա ասուածացրեց տանջանքը: «Եղէ՛ք կատարեալ, որպէս ձեր երկնաւոր հայրը կատարեալ է» — իսկ «Լինելու» ճանապարհը, անվերջ նը-

ւաստացումը, անսահման տանջանքն էր: Ասուածանալու իր այս պատւէրով նա ասուածացնում էր տանջւողներին՝ իդէալականացնում ու պաշտամունքի առարկայ էր դարձնում տանջանքը — «փրկութեան» միակ ճանապարհը: Եւ այդպիսով — եթէ կարելի է այսպէս նորօրինակ արտայայտել — նա հաւատացեալների համար «քաղցրացնում» էր տանջանքը, կեանքի ամբողջ իմաստն և բովանդակութիւնն դարձնում:


Չարչարանքի այս վարդապետութեան և տանջանքի այս պաշտամունքին ապացոյց քրիստոնէութեան ամբողջ պատմութիւնը, անանուն մարտիրոսագրութեան այդ եղակի յուշարձանը:

Ուրեմն Քրիստոս եկել էր ոչ թէ իրօք տանջուածների ու զրկեալների տանջանքը մեղմացնելու, ոչ թէ տանջանքից ազատելու, այլ երկնային շողերով և յանուն Աստուծոյ գեղեցկացնելու, քաղցրացնելու այդ՝ բռնակալների ու տէրերի տանջանքից դէպի ասուածային իր էութեամբ աւելի սոսկալի տանջանքը տանելու, որ անվերջ ու անսահման էր հէնց նրանով, որ ասուածային կատարելութիւնն ինքը անսահման էր սւ անհասանելի: Եւ Քրիստոսի բերած տանջանքն արդէն վերջ չունէր:

Ահ, չարչարանքի այս անմիտ ասուածացումը և այդ սեանուն Հանդերձեալ կեանքը — գաղափարների ու ցնորքների բռնակալութեան պատմական անխախտ պատանդաններն են: Դրա՛խտ — դարերի անլուր և անթիւ յանցանքների ու հրէշային ոճրագործութիւնների հաւաքական անուն, նոցովքի ու անէծքի անուն:

Եւ բնակազարար քրիստոնէական կրաւորականութիւնն ու սրանից բղխող յուրանութիւնն

2173 - 2002



նը և երկրաւոր ցաւերը մեղմացնելու ձգտումը սնուցել են անդրաստեղեան այդ մեծագոյն ցընորքը, այդ գերազանցապէս կորստաբեր ու ստրկացնող գաղափարը:

Գաղափարների ու համամարդկային մտապատրանքների բռնութեան գահերի սև շարանի մէջ «Աստծուց» յետոյ երկրորդ տեղը դրան է պատկանում:

«Աստուած» և «Հանդերձեալ կեանք» — անմիտ, բայց արիւնոտ զառանցանքներ, թերևս դարերի թշուառութիւնների ու նեղութիւնների սև ու կարմիր էջերով գրւած պատմութեան բուն յանցաւորները, թագնւած հեղինակները:

Մի ուսմունք, որ երկինքով սկսում և երկինքումն էլ վերջանում էր, բնականաբար լորովին անտարբեր էր երկրային կեանքի տիրող կարգերի հանդէպ:

Սօցիալիզմը, ընդհակառակը՝ տրամադիր չէ ներկայով տիրող հասարակական դրութեամբ գոհանալու: Նա ձգտում է յեղաշրջել, փոխել հիմքից բոլոր քաղաքական-ընկերական իրաւակարգերն ու տնտեսական յարաբերութիւնները: Իբրև ծնունդ ժլորդ դարի բնապաշտական քննական փիլիսոփայութեան և աւելի որոշւած ու հասունացած պատմութեան իրապաշտական հասկացողութեամբ՝ սօցիալիզմը երազների աշխարհներում լոկ մտքով անպտուղ սաւառները շատ և շատ ձանձրալի դրօսանք գտաւ և երջանկութեան երկինք որոնելը — ամենամեծ անմտութիւն:

Լուսաւորութեան շրջանը արդէն ջախջախել էր դարեր շարունակ անմերձենալի բռնութեան շատ կուռքեր ու գահեր և սին ցնորք-

ներ: Սառն բանականութեան անողոք քննադատութեամբ հնութեան դիւանն էին ընդմիջտ ձգւել մարած գաղափարներ ու փտած հասկացողութիւններ, քարացած աւանդութիւններ ու նեխւած սովորութիւններ: Միջնադարեան կապանքներից «վերածնութեամբ» արթնացած մարդկային ինքնագիտակցութիւնը նոր լոյս էր սփռել նաև հասարակական երևոյթների ու կարգերի վրայ, պատուել դրանց հաւատարիմ պաշտպանի դիմակը — խորտակել էր դրանց ասֆալտային ծագած գաղափարը և հաստատել դրանց մարդկային մտքի և ուժերի արդիւնք լինելը: Եւ դա չնչին ծառայութիւն չէր: Դրանով սօցիալիզմը ձանապարհ էր հարթում: Հասարակական ձևերի ու երևոյթների աստուածային ծագման բացասումով՝ խորտակում էր աղնւապետութեան և բացարձակապետութեան իսկական հիմք՝ աստուածապետութիւնը: Միանգամ որ ընդունւեց դրանց մարդկային ծագումը պատմութեան և առհասարակ ամբողջ հասարակական կեանքի վրայից վերանում է այդ երկնային-աստծու կամ դրա «կամքով» թագաւորողի միահեծտն խնամակալութիւնը, Նթէ մարդկանցից են բղխում օրէնքներն ու կարգերը, ապա եթէ այդ մարդիկ կամենան վաղը բոլորովին նոր օրէնքներ, կեանքի նոր պայմաններ կարող են սահմանել: Ահա թէ ինչպէս աստուածապետութիւնը նախ դեռ մարդկանց գիտակցութեան մէջ տեղի է տալիս ռամկապետութեան — ժողովրդապետականութեան հասկացողութեան:

Եւ հետևաբար սօցիալիզմի համար ոչինչ չկար մշտական, անանց, անփոփոխելի, այլ իբ-

րև մարդկային ստեղծագործութեան արդիւնք՝ անցաւոր, փոփոխելի, բնականաբար և մարդկանց ընկերա-տնտեսական յարաբերութիւնները, առհասարակ ամբողջ հասարակարգը:

Ահա՛ այսպէս անհաշտօրէն՝ թէ տեսական և թէ գործնական աշխարհում՝ իրար հակադրում են քրիստոնէութեան հեղինակութիւնները և գործերի վրայ հիմնւած աստուծպետութիւնը և սօցիալիզմի քննադատութեան ու ազատութեանց վրայ խարսխւած ժողովրդապետութիւնը:

Սօցիալիզմի և քրիստոնէական փոխադարձ բացասման կէտերից մէկն է նաև դրանց աշխարհայեցողութեան ընդհանուր բնաւորութիւնը, ոգին աշխարհի և կեանքի նշանակութեան և արժէքի նկատմամբ, և այդ հիմնական տարբերութիւնը բղխում է նրանց էութիւնից: Մինչդեռ սօցիալիզմը իբրև պայքարող, այս աշխարհի երջանկութեան ձգտող՝ լաւատես կեանքի նկատմամբ՝ քրիստոնէութիւնը ամբողջովին յոռետես է, մինչ՝ ըստ առաջնի աշխարհը, բնութիւնը ժպտուն գեղեցկութեան և գերագոյն երջանկութեան մի անսպառ աղբիւր է, ըստ վերջնի դա լոկ տանջանքի և արցունքի «Հովիտ» է, մի մեծ բանտ: Ըստ Սօցիալիզմի աշխարհը ի բնէ ոչ չար. բնութիւնը լի է բարիքներով, վատ են միայն մարդկային կարգերն ու անիրաւ ընկերական յարաբերութիւնները: Քրիստոնէութիւնը կեանքի դժբաղդութիւնը գտնում է մեր մարմնաւորութեան, աշխարհիս նիւթեղէնութեան փաստի մէջ և հետևաբար ոչ մի փրկութեան ելք չի գտնում այս աշխարհում, ուստի և անվերջ յուսահատութիւն պատրաստում

մարդկանց համար և այս կեանքի բացասման մէջ գտնում միակ փրկութիւնը. սօցիալիզմը ընդհակառակը, պինդ կառչում է այս աշխարհին, չարիքը ոչ թէ տիեզերական, այլ ընկերական դարձնում և ազատ կեանքի ճանապարհը տիրող անարդար կարգերի մէջ փնտռում: «Ամենասրբազան իրաւունքը -- դա ապրելու, կեանքը վայելելու իրաւունքն է, ահա՛ այս իրաւունքի բացասման և հաստատման մէջ է երկու աշխարհայեցողութիւնների հիմնական հակադրութիւնը: «Սօցիալիզմը յենում է կեանքի դրական իրաւունքի վրայ, բոլոր՝ թէ մտաւորական և թէ Ֆիզիքական վայելքների վրայ. նա սիրում է կեանքը և ուզում է լի ու լի վայելել այդ: Նա երբէք չէ ասել թէ մահը ցանկալի է ամեն բանից» (Բակունին): Այս վարդաշող լաւատեսութեամբ սօցիալիզմը քրիստոնէութեան մոայլ և մահաշունչ յաւերժութեան այնքան է նման՝ որքան պայծառ և կենսուրախ առաւօտը խաւար գիշերւան. երկսի առնչութեան կէտերը մթնշաղային անորոշութեան «վայրկեաններ» են, իսկ հատեցումը հնարաւոր է միայն մէկն ու մէկի վերացման, բացասման գնով:

Այսքանից պարզ է, որ քրիստոնէական սօցիալիզմը կամ սօցիալիստ քրիստոնէութիւնը մի ինքնին հակասութիւն է, տեսանք, որ սօցիալիստական չէր ֆրիստոսի ուսմունքը, կը տեսնենք իսկոյն, որ սօցիալիստական չէին բառիս բուն իմաստով թէ քրիստոնէական առաջին համայնքների կօմունիզմը և թէ յետագայում այսպէս կոչւած քրիստոնէական սօցիալիզմը և վերջապէս այդպիսին չէ և չէ էլ կարող լինել եկեղեցիների քրիստոնէութիւնը, եթէ միայն

սա արդէն այլ ևս քրիստոնէութիւն անւանել կարելի է :

Քրիստոս Հեռու էր իր պատմական դրութեամբ սօցիալիզմի գաղափարից շնորհիւ իր վերացականութեամբ և ապադասակարգային ցնորականութեամբ . սակայն մի առանձին նորութիւն չէին նաև քրիստոնէական առաջին համայնքները, որոնց երբեմն թիւրիմացութեամբ մեծ նշանակութիւն է տրուում յենկելով Առաքելոց թղթի հետևեալ խօսքերի վրայ . «սակայն հաւատացեալների բազմութիւնը մի սիրտ և հոգի էր . նոյնպէս ոչ ոք չէր ասում իր ունեցւածքի համար թէ դու երբէն է, այլ ամեն ինչ նրանց մէջ ընդհանուր էր . . . : Եւ ոչ ոք նրանցից կարիք չէր զգում, որովհետև բոլորն էլ, ով դաշտ կամ տուն ունէր, ծախում էին և ծախած ինչքի փողը բերում և դնում էին առաքեալի ոտների առաջ, և խորհուրդով որոշեցին, որ ոչ ոք չէր պահել ոչ ոքի ունիւնը . . . և այլն *): Առաջին հայեացքից թւում է թէ մի իսկական (կօմմունիստական) համայնական դրութեան հետ գործ ունինք, սակայն գործին ի մօտոյ քննութիւնը ցոյց է տալիս, որ նախնական քրիստոնէութեան այդ սաղմային համայնակեցութիւնը ևս մի առանձին արժէք ունենալ չի կարող, որովհետև դրանց կեանքի կոչող պատճառները շատ թոյլ էին և լոկ տեսական, եթէ ի նկատի ունենանք, որ այդ համայնքները կազմուել էին նախ՝ Քրիստոսի երկրորդ շուտով գալստեան անմիջական հաւատքի տակ և ապա այն գլխաւոր հանգամանքը, որ այդ համայնակեցութիւնը լոկ սպա-

*) 4-րդ գլուխ, համար 32, 34, 35 :

ռող և ոչ արդիւնաբերող էր, որ այդ յիշեալ տողերում և ուրիշ ոչ այլուր խօսք չկայ համայնական արդիւնաբերութեան, աշխատանքի մասին, այլ որ համայնքի անդամները միայն առատ վայելում էին, ինչ իրենց բարի կամեցողութեամբ զոհաբերում էին աւելի հարուստ անդամները, — այս բոլորը և այն պարագան ի նկատի առնելով, որ սօցիալիզմը ամենից առաջ կազմակերպւած համայնական արդիւնաբերութեան տնտեսութեան եղանակ է, կը կարողանանք հեշտութեամբ գնահատել հաւատացեալների այդ հոգեշահ և բարեգործական համայնքների արժէքը սօցիալիստական տեսակէտից : Սօցիալիզմի անունը այդ պիսի համայնքների համար կիրառելը մի խոշոր թիւրիմացութիւն կը լինէր, որովհետև հաւասարութիւնը միայն համայնքի ներսում և ոչ նաև դրսում էր տարածուում : Դրանից դուրս նա պահում էր մասնաւոր սեփականութիւնը և ոչ մի առանձին հարկադրական միջոց չկար դրա վերացման համար, այլ ամեն ինչ կախւած էր, ինչպէս շեշտեցի, համայնքի անդամին, և չի մոռանանք, որ այդ պիսիք միայն «հաւատացեալներ էին — բարի կամեցողներ *):

Իսկայն այդ նախնական քրիստոնէական «կօմմունիզմից» շատ քիչ է տարբերում միջնադարում ծայր տուող քրիստոնէական «սօցիալիզմը», որը դրանից աւելացած էր միայն իր արատներով : 12 և 14—16 դարերի ընթացքում Հօլանդիայում, Գերմանիայում և Ֆրանսիա-

*) Նոյն տեղը, յաջորդ 5-րդ գլուխ, 1—9 մար :

յում կաղմուած համայնքները մի քիչ աւելի հեռուն գնացին իրենց «սօցիալիզմ»ով և մասնաւոր սեփականութեան վերացմամբ նրանով, որ ընդհանուր հաւասարութիւնը տարածեցին նաև կանանց վրայ և շուտով «քոյր և եղբօր» յարաբերութեան ցուցանակի և առերևոյթ վանական խստաբարոյութեան տակ ամենախայտառակ անբարոյականների որջեր դառան և զուրկ լինելով ուէ հիմքերից՝ քայքայւեցան անհետ:

Որքան ապիկար և անկարող էին իրենց բընոյթով և հասարակական պայմաններով այդ համայնքները իսկական սօցիալիստական լինելու ևս առաւել գիտակցօրէն այդպիսին չեղաւ նաև Եկեղեցին: Ընդհակառակը, Եկեղեցու քրիստոնէութիւնը սկզբից և եթ մի անհաշտ հակասօցիալիստական դիրք բռնեց իբրև որոշ ուրոյն շահերով կազմակերպւած դասակարգի՝ հոգեւորականութեան հաստատութեան նա արմատախիլ արեց բոլոր սօցիալիստական սաղմները քրիստոնէութիւնից և Քրիստոսի անունը մի վատթար շահագործման միջոց դարձրեց: Դեռ հէնց առաջին դարերում «Եկեղեցու հայրերի» հեղինակութեամբ նա ներառործեց մասնաւոր սեփականութիւնը իբրև աստուածագիր մի սըրբազան և անձեռնմխելի հաստատութեան (Թոմաս Աքւինացի) և ողորմութիւնը իբրև սօցիալական բախասան յայտարարեց:

Հոգեւորականութիւնը իբրև արտօնեալ և սեփականատէր մի դասակարգ դրանից յետոյ մինչև այժմ միշտ ժողովրդական շահերի ու իրաւունքների թշնամի է հանդիսացել և Քրիստոսի գեղեցիկ երազանքները միայն հասարակական գիտակցութեան մթազնման միջոց

դարձրել: Որպէսզի իր և իր դաշնակիցների պետութեան ու ազնւականութեան տիրապետութիւնը հաստատ պահեն, նա ամեն կերպ աշխատել է թունաւորել ժողովրդի միտքն ու հոգին Քրիստոսի աշխարհատեաց յոռետեսութեամբ, ցնորական յոյսերով վառել նրա կրօնական մոլեռանդութիւնը ու նրա ամբողջ ուշադրութիւնը թեքել դէպի երկինք: Խաւարեցրած մտքերի այս անբարոյական տիրապետութեամբ նա մեռցրել է ժողովրդի մէջ հետաքրքրութիւնը դէպի իր սօցիալ-տնտեսական կեանքը, դէպի հասարակական անարդարութիւնները ու բարեփոխութիւնները: Աշխարհի ունայնութեան գիտակցութիւնը մշակել է այն սօցիալ-քաղաքական շահաւէտ անտարբերութիւնը, որ ամենալաւ միջոցն էր ծծելու ժողովրդի թէ մտաւոր և թէ նիւթական հիւթերը: Եկեղեցին և հոգեւորականութիւնը աւելի ևս զօրեղացրին Քրիստոսի ուսմունքի այդ բացասական կողմը և այնպէս աղճատեց այդ, որ նախնական քրիստոնէութեան նկատմամբ դա ծաղր ու հեգնանք էր միայն, այնպէս որ մարդ կարող է նաև մի Եկեղեցւոյ քրիստոնէութիւնից խօսել՝ բացարձակապէս հակաքրիստոնէական իմաստով:

Եկեղեցին իր դասակարգի շահերի և զօրութեան համար միանգամայն անտես է առել բուն քրիստոնէութեան սաղմային սօցիալիստական թէօրիսները: Իւ այդ կատարել է նա միշտ դրանց անունից խօսելով, որ երբէք չի արգիլել, որ նա առաջինը ոտի տակ տայ այդ վեհ, համամարդկային սկզբունքները և սօցիալ-բարոյական նօրմերը, «որոնք 18 դարերի ընթացքում Եկեղեցու համար իբրև ցուցանակներ են ծա-

ռայել և դործադրել նրա ձեռքով միմիայն մարդկային գանգալածներին ճնշելու և կեղեքելու համար», ասում է Ա. Բէթէլ *) :

Ունենալով իր ուրոյն դասակարգային շահերը, ապրելով անվաստակ աշխատանքով և մասնաւոր սեփականութեամբ՝ նա միշտ պաշտպան է հանդիսացել ամենատեսակ ճնշումների ու հայածանքների, արտօնութիւնների և թշնամութիւնների: Բնականաբար նա շահայիջ իշխող դասակարգերի զինակիցն է եղել, նոյն իսկ գաղափարախօս թէ ու թիկունքը, նրանց դասակարգային արտօնութիւնների և ապօրինութիւնների սրբագործողը, «օրհնողը», ժողովրդին յանուն ամենասէր Քրիստոսի ոչ միայն իր այլազգի և այլակրօն, այլ ազգակից, բայց այլադաւան կամ այլադասակարգ եղբայրների դէմ գրգռողը: Մի կողմ՝ թողած պատմական ոճրագործ պապերին, յիշենք հէնց «մեծ» բարենորոգիչ Լիւթէրին, որ գիւղացու որդի լինելով հանդերձ, հաւատարիմ իր դասակարգային շահերին, գերմանական գիւղացիական շարժման մասնակիցներին «աւազակներ» յայտարարեց իր հռչակաւոր թռուցիկի մէջ՝ «ընդդէմ աւազակային և մարդասպան գիւղացիներին»: Պապի, եկեղեցու բռնակալութեան դէմ ծառայող՝ մի րոպէ չդադարեց իր «ագատարար» գրիչը թաթախելու և հետևեալ նոյնք ու անէծք խօսքերի մէջ Քրիստոսի, Սիրոյ առաքեալի սէր քարոզող ներկայացուցիչ հոգեւորականութեան այս վկայականը տալու. «Սոս-

*) «Քրիստոնէութիւն և սօցիալիզմ», հայեր. թարմ. Վ. Ն. եր. 54.

նեցե՛ք քուտրին, Աստուծ իբրայիններին կը ճանաչէ *), իսկ Մեւանքտօն ասում էր. «դա (ժողովուրդը) այնքան անկիրթ է և վայրենի, որ նրան դեռ աւելի պակաս ազատութիւն է հարկաւոր»:

Եւ այդ նոյնը ամեն տեղ, բոլոր հին ու նոր, ուղղափառ և ոչ ուղղափառ, պահպանողական թէ «ժողովրդասէր» եկեղեցիների մէջ: Այդ ամենը յանուն իր շահերի և իշխանութեան, իսկ իր հաւատացնելով քրիստոնէութեան ծաւալման համար:

Եւ ամենասոսկալի ու աշխարհասասան, երկարատե սրածութիւններն ու պատերազմների հեղինակը, որոնք հրով ու սրով են մկրտել մարդկութիւնը՝ եկեղեցին է եղել, — անմիտ խաչակիր արշաւանքներ, հրէշային հաւատաքըննութիւններ, կրօնական անվերջ հալածանքներ, կարմիր «գիշերներ» և արեան «հարսանիքներ», երեսնամեայ պատերազմ և այլն, և այլն, — ահա եկեղեցու սիրոյ գործերը:

Բացի անմիջական շահագործումից՝ եկեղեցին կատարել է և միջնորդի անպատուաբեր ու երկերեսանի դերը շահագործող և շահագործւող դասակարգերի մէջ՝ ոչխարային հնազանդութիւն և համբերութիւն քարոզելով, — կրել ամեն տեսակի տանջանքներ և զրկանքներ հանդերձեալ կեանքում վարձատրելու պայմանով: «Ծառանե՛ր, հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերին» -- ահա՛ եկեղեցու հակայեղափոխականութեան ամենապերճախօս վկայականը, փոխանակ անհնազանդութեան և ըմբոստացման

*) Maier. Sociale Bewegungen und Theorien, երրորդ հրատ., 1906, Լայպցիգ, 68 եր.

յորդորներին, փոխանակ ցասկոտ ընդվզումներին վառ կոչերով փոթորկելու մարդկային զանգու-
 ւածների գիտակցութիւնը և ծառայեցնելու այդ
 տէրերի դէմ:

Եկեղեցին ազատութեան թշնամին է: Դա-
 րեր շարունակ նա ձգտել է հաստեցնել աշխա-
 տանքն ու կեղեքումը, ստրկութիւնն ու իշխա-
 նութիւնը ետ կասեցնելով ամեն կերպ ժողո-
 վըրդին ընկերական յեղաշրջումներից՝ իր սե-
 փական կաշւից վախենալով: «Հանդերձեալ
 կեանքի» վարձատրու պատրանքը ընկերա-
 քաղաքական պահպանողութեան պատճառն է.
 «Եթէ օրօրում են քեզ այն յուսով, որ այնտեղ,
 ապագայ կեանքում ամեն ինչ իր իսկական գնա-
 հատութիւնը կը ստանայ և ամեն մէկը կը վար-
 ձատրուի իր վաստակի համաձայն՝ կորչում է
 երկրում արդարութիւն և հաւատարմութիւն
 հաստատելու ձգտման ամեն մի դրդիչ... շա-
 րունակ երկնքին դիմել նշանակում է բարեփո-
 խութեան ձգտումը մեռցնել և մարդկանց ի-
 րենց կեանքի բանականօրէն կազմելու աշխա-
 տանքին արգելք լինել», ասում է Ռընան *):
 Այդ յոյսը՝ վարձատրելու այս կեանքում, աւե-
 լի դրական էր թւում բազմաշարշար վաստակեալ-
 ների համար. նրանք մեծ համբերութեամբ գե-
 րադասում էին այս ժամանակաւոր չարշարանք-
 ները երկրային վայելքներից յաւիտենական
 յուսով և խեղդում իրենց մէջ ամեն մի
 դժգոհութեան զգացմունք իբրև մեղանշումն:
 Տիրող կարգերի առաջ այս փառաբանութիւնը

*) է. Վանտէրվէլտէ. «Սօցիալիստական է-
 տիւտներ», եր. 5.

ուժեղանում էր մի այլ հաւատով՝ թէ «բոլոր
 իշխանութիւնները Աստուծոց են գալիս» (Պօղոս
 առաքեալ):

Իր իշխանութեան հիմերը աւելի ամրաց-
 նելու համար, եկեղեցին նրբանկատ հեռատե-
 սութեամբ սկզբից և եթ ջանաց ի մի ձուլել ազ-
 գութեան և կրօն-եկեղեցու գաղափարները, նոյն
 իսկ նոյնացնել. ազգ ասելով կրօն, որոշ դաւա-
 ւանանք և ընդհակառակը կրօն ասելով՝ ազգ
 հասկանալ, սրովհետև ժողովուրդների հոգե-
 բանութեան մէջ ամենից ուժեղ գաղափարը
 եղել է և է ազգութեան գաղափարը, ազգային
 զգացմունքը, որոշ հոգեմտաւոր սեփականու-
 թիւնների հարազատութեան բնական կապը: Եւ
 այստեղ ևս եկեղեցին անհաւատարիմ լինելով
 Քրիստոսին, նրա ապագային, համամարդկային
 սկզբունքին՝ հաւատարիմ է մնացել ինքն իրեն,
 իր շահերին. իսկ քանի որ ազգութիւնն ևս նրա
 համար միայն շահագործման միջոց էր, ուստի
 նա տեղին դուրս է եղել դրա շրջանակներից,
 չկտրւելով հանդերձ որոշ ազգից՝ Քրիստոսի
 «հօտը» մեծացնելու համար: Իսկ ընդհանրապէս
 ազգայնական և կրօնական հակառակութիւնը
 սրելով՝ թոյլատրել է դասակարգայինը. ընդ-
 հանուր, ազգային եկեղեցու կամ կրօնի պահ-
 պանման համար միշտ միացել են հակադիր
 շահերով անհաշտօրէն իրար ընդդիմաւորւած
 դասակարգերը և նոյն իսկ մոռացել իրենց հա-
 կադրութիւնը:

Այս բոլորից պարզ է, որ մենք գործ ունենք
 երկու տեսակ քրիստոնէութեան հետ՝ նախնա-
 կան և եկեղեցական քրիստոնէութիւն. որքան
 առաջինը ապադասակարգային և համամարդկա-

յին է, այնքան երկրորդը նեղ դասակարգային և երբեմն մոլեռանդ-ազգային է: Առաջին քրիստոնէութիւնը միայն կրօնական երազողներին համար կարող է հետաքրքրութիւն ետ բերէ՞ք ունենալ, քանի որ նա իր զուտ դրութեամբ վաղուց պատմութեան դիւանը ձգւած է իբրև անհող ձայն բարբառոյ յանապատիի վկայագիր. իսկ եկեղեցու քրիստոնէութեան համար կ'ասենք, որ եկեղեցու հիմնաքարերը քրիստոնէութեան գերեզմանաքարերն են: Եկեղեցու ծննդեան օրը միաժամանակ քրիստոնէութեան մաշւան և թաղման օրն էր: Այդ օրւանից այլ ևս քրիստոնէութիւնն, իբրև քրիստոսի վարդապետութեան գոյութիւն չունի, այս մըտքով դրա անունից խօսողները ամենամեծ սրբապղծութիւն են կատարում: Չկայ քրիստոնէութիւն, այլ կայ միայն «եկեղեցու վարդապետութիւն» կամ կեղծ քրիստոնէութիւն:

Եւ այդ օրւանից եկեղեցին առաջին հակաքրիստոնէական, տէրերի հաստատութիւնն ներկայանալով՝ նաև հակաժողովրդական մի հաստատութիւն է դարձել: Սակայն կրօնի իտէական, գազափարական մահացման զուգակցում է նաև եկեղեցու գործնական անկումը — սօցիալիզմի յաղթական յառաջխաղացութեամբ: Կրօնը մեռնում է և դրա հետ եկեղեցին. եթէ ուրիշներին յարութիւն տալ անկարող են, ևս առաւել սօցիալական մեռելներին, որպիսին է եկեղեցին: Քանի որ եթէ քրիստոս յարութիւն առել է, քրիստոնէութիւնը յարութիւն չի առնի:

Մնայունը կեանքն է, որ ծնունդ է տալիս և պահպանում այս կամ այն հասարակական երևոյթը՝ երբ և որքան կարիք ունի և մերժում,

մահւան դատապարտում, երբ նրա պաշտօնը սպառւած է, երբ նա կորցրել է իր գոյութեան իմաստը, ապրելու իրաւունքը, երբ նա հասարակական զարգացման նպաստման փոխարէն խանգարում է, մլաւում, երբ նա առաջըլմական ազդակից յետաշրջական է դառնում, որպիսին է այժմ եկեղեցին: Եթէ կ'ուզէք նրա շիք չարիք առանց բարիքին պատմական ամենահոյակապ յուշարձանն է: Ահա՛ այդպիսի անգործօն, իրեն վերապրած ճնշողական դարձած երևոյթների վերաբերմամբ կեանքը անողոք ֆրօնօսի(*) դեր է կատարում՝ ոչնչացնելով իր սեփական գաւակներին, վրդովեցուցիչ է, բայց պատմական օրէնք է. սօցիալիստները չեն ստեղծում այդ օրէնքը, նրանք չեն քանդում եկեղեցին, նրանք միայն հաստատում են այդ օրէնքը, որ եկեղեցին ևս համաձայն այդ ընկերաբանական օրէնքի՝ գերեզմանւում է անխուսափելիօրէն: Սօցիալիստները միայն գերեզմանափորի անհրաժեշտ դերն են կատարում:

Յուզարկաւորման իրենց այս ընկերական պարտականութիւնը կատարելով՝ նրանք չեն մոռանում իրենց վերջին յարգանքը մատուցանելու և ի յիշատակ՝ ճառելմէջ յիշելու, որ, այո՛, եկեղեցին անտարակոյս պատմականօրէն որոշ դրական դեր կատարել է մանաւանդ քաղաքական անկախութեան գարկ տել մանր ազգերի կեանքում՝ կրօնի և ազգութեան գաղափարները միացնելով՝ գերազանցապէս բացասական լինելով հանդերձ:

(*) Դիցարանութեան մէջ ժամանակը խորհրդանիշող Աստուածը:

Իսկ այժմ հասարակական կեանքի ընկերա-
տնտեսական յարաբերութիւններում, դրական
և բնական գիտութիւնների դարում՝ եկեղեցու
և կրօնի դերը գերօրի է հաւասարեւել թէ տեսա-
կան և թէ գործնական իրականութեան մէջ
նրանով, որ դրանց պաշտօնները իրենց վրայ
են վերցնում այլ իտէատեսներ եւ հասարա-
կական հաստատութիւններ:

Վերջին փորձը այդ կենդանի պահելու ժո-
ղովրդական արթնացող գիտակցութեան մէջ՝
դրա հաւատալիքները գիտութեան հետ հաշ-
տեցնել ճգնելով՝ կը մնայ մի ապարդիւն աշխա-
տանք: Մահացու վիրաւորին կամ ներկայ դէպ-
քում բնական մահով մեռնողին չի օգնի և ո՛չ
մի գիտական անդամահատութիւն: Կրօնի հա-
ւատալիքները, յայտնութիւնները գիտութեան
ճշմարտութիւնների մէջ իրենց լրացման փոխա-
րէն իրենց բացասումն են գտնում. աշխարհի և
մարդու աստածաշնչային ստեղծագործութիւ-
նը, միանձաւորեալ Աստծու գոյութիւնը, հո-
գու անմահութիւնը, հանդերձեալ կեանքը չեն
հաշտւի երբէք երկրի և մարդու զարգացման
տեսութեան հետ: Այս փորձը աւելի կը խորացնի
դրանց մահը՝ ցոյց տալով դրանց սկզբունքային
անհաշտ հակառակութիւնը:

Հաշտեցումը չկայ և չի կարող լինել, ինչ-
պէս չկայ լոյսի և խաւարի մէջ. իսկ բոլոր ար-
հեստական միջոցներով ստեղծւած կրօնական
աղջամուղները վաղանցիկ են. կը բացւի կրօնի
ամպամած երկինքը և կը փայլի, գիտութեան
լոյսի ու ընկերական ազատութեան արևը ա-
նարգել ու պայծառ, որքան էլ բոլոր կարգի
ւարջը օրհասականք հզօրագոյնս կուրին:



« Ազգային գրադարան



NL0161637

